ԳՈՀՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամեն առավոտ նա հանդիպում էր մաշված վերարկուով ծանրամարմին, միջին տարիքի մի կնոջ, ով մանրադրամ էր մուրում հին աղյուսաշեն եկեղեցու մուտքի մոտ: Նա ժպտալով ողջունում էր բոլորին և սիրալիր կերպով «Բարի լույս» ասում: Փեմը գրեթե միշտ ինչ-որ բան էր տալիս նրան: Այդպես շարունակվեց գրեթե մեկ տարի, բայց մեկ օր մաշված վերարկուով կինն անհայտացավ: Փեմը մտածում էր, թե ի՛նչ կարող էր պատահել նրան: Եվ մի գեղեցիկ օր նա կրկին կանգնած էր եկեղեցու մուտքի մոտ՝ նույն մաշված վերարկուով: Երբ Փեմը վերցրեց դրամապանակը՝ իր սովորական նվիրատվությունն անելու համար, այդ կինը կանգնեցրեց նրան. «Շնորհակալություն, որ օգնում էիք ինձ այդ օրերի ընթացքում», - ասաց նա, - «Դուք այլևս չեք տեսնի ինձ այստեղ, որովհետև ես աշխատանք եմ գտել»: Ասելով դա՝ նա մի փաթեթ մեկնեց Փեմին: Նա կանգնած էր իր հին տեղում և սպասում էր, բայց ոչ թե փողի, այլ իրեն ծանոթ մարդկանց՝ ամեն մեկին մի փքաբլիթ հյուրասիրելու համար:

Նա գոհացող էր:

(Ղուկաս 17:11-19)

Եւ եղաւ՝ երբոր նա Երուսաղէմ էր գնում, ինքը Սամարիայի և Գալիլեայի միջովն էր անցնում: 12 Եւ նա մի գիւղ մտնելիս, տասը բորոտ մարդիկ պատահեցան նորան, որ հեռուանց կանգնեցին, 13 Եւ իրանց ձայնը բարձրացրին և ասեցին. Յիսուս՝ Վարդապետ, մեզ, ողորմիր: 14 Եւ երբոր տեսաւ՝ ասեց նորանց. Գնացէք ձեր անձերը քահանաներին ցոյց տուէք. և եղաւ, որ նորանք գնալիս՝ սրբուեցան: 15 Եւ նորանցից մէկն, երբոր տեսաւ թէ բժշկուեցաւ, ետ դառաւ՝ բարձր ձայնով փառաւորում էր Աստուծուն: 16 Եւ իր երեսի վերայ ընկաւ նորա ոտների առաջին, և գոհանում էր նորանից. և ինքը Սամարացի էր: 17 Յիսուսն էլ պատասխանեց և ասեց. Չէ՞ որ տասն էլ սրբուեցան. ապա այն ինն ո՞ւր են: 18 Ետ դառնողներ չ՚գտնուեցան, որ Աստուծուն փառք տան, բացի այս այլազգին: 19 Եւ ասեց նորան. Վեր կաց՝ գնա. քո հաւատքն ապրեցրեց քեզ:

I. ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՂԵՔ ՆՈՒՅՆԻՍԿ ԴԺՎԱՐԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ

Այս տեսակի գոհացող վերաբերմունքը՝ հավատք է:

Մի՞թե մենք կարող ենք սրանից ավելի համոզիչ դաս ստանալ այս Գոհության շաբաթվա ընթացքում: Դուք չեք կարող սպասել, որ խնդիրները վերջանան, որպեսզի սկսեք հավատքով ապրել: Դուք չեք կարող պայմաններ թելադրել Սուրբ Աստծուն: Դուք չեք կարող ասել. «Տե՛ր, երբ բավականաչափ փող ունենամ, ես կկատարեմ Քո հանձնարարությունները»: Դուք չեք կարող աղոթել. «Տե՛ր, եթե Դու պարզապես լուծես այս

հարցն իմ ընտանիքում, ես կսկսեմ եկեղեցի հաճախել»: Դուք չեք կարող պայմաններ թելադրել Աստծուն: Ընդհակառակը՝ Աստված Ինքն է պայմաններ թելադրում մեզ. Նա պահանջում է, որ մենք հավատանք, մինչև որ փոփոխություններ տեղի ունենան:

Հովիվ Ջեկ Հինտոնը՝ Հյուսիսային Կարոլինա նահանգի Նյու Բերն բնակավայրից, երկրպագության ծառայություն էր առաջնորդում Տաբանգո կղզում գտնվող բորոտների գաղութում 1996 թվականին: Երբ վերջին երգի ժամանակն էր, նա հարցրեց, թե արդյո՞ք ինչ-որ մեկը ցանկանում է որևէ երգ առաջարկել: Մի կին, ում դեմքը չէր երևում ամբիոնի կողմից, շրջվեց:

«Դա ամենասոսկալի դեմքն էր, որը ես երբևէ տեսել էի», - հիշում էր Հինտոնը: - Այդ կինն ընդհանրապես չուներ քիթ և ականջներ: Հիվանդությունը զրկել էր նրան նաև շուրթերից: Նա բարձրացրեց իր առանց մատների ձեռքը և խնդրեց. «Կարո՞ղ ենք երգել ,Հաշվի՛ր քո բազում օրհնությունները երգը»:
Չկարողանալով զսպել զգացմունքները՝ Հինտոնը հեռացավ ծառայության վայրից: Նրան հետևեց թիմի անդամներից մեկը: Ի վերջո, նա ասաց. «Ջե՛կ, կարծում եմ՝ դու այլևս չես կարողանա երգել այդ երգը»: «Ո՛չ, կկարողանամ», - պատասխանեց Ջեկը, - «բայց ես այլևս չեմ երգի այն առաջվա պես»:

II. ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՂԵՔ, ԵՐԲ ՏԵՍՆՈՒՄ ԵՔ ԱՍՏԾՈ ԲԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս տեսակի գոհացող վերաբերմունքը՝ երկրպագություն է:

Բժշկված բորոտներից միայն մեկը վերադարձավ Հիսուսի մոտ՝ փառաբանելով Աստծուն: Նա շնորհակալ էր: Նա արտահայտեց մարդկանց առջև այն, ինչ իր ներսում էր: Նա բարձրաձայն գոհանում էր և բոլորովին չէր ամաչում:

Ինչո՞ւ էր նա բարձրաձայն գոհություն հայտնում: Նա մշտապես ստիպված էր գոչել, երբ բորոտ էր: Հավանաբար, տարիներ շարունակ նա այդպես էր վարվել: Նա, երևի, այնքա՜ն էր գոչել, որ չգիտեր էլ, թե ինչպե՞ս մոտենար Տիրոջը լռությամբ, կամ նույնիսկ սովորական ձայնով: Վերադառնալով և ընկնելով Հիսուսի ոտքերի մոտ՝ նա փառաբանում էր Աստծուն սովորականից ավելի բարձր ձայնով:

Ահա և զարմանալիորեն հակիրճ գործնական առաջադրանք: Անպայման ժամանա՛կ հատկացրեք այս շաբաթ, որպեսզի գոհանաք Աստծուց Նրա բարության համար: Իրական գոհությո՛ւն մատուցեք Նրան: Անպայման հավաքե՛ք ձեր ողջ ընտանիքը՝ Գոհության աղոթքի համար, և իսկապես գոհության աղո՛թք մատուցեք: Բաց մի՛ թողեք Աստծուն երկրպագելու հնարավորությունն այս շաբաթ: Եվ բարձրաձա՛յն արեք դա:

III. ԹՈՂ ՈՐ ՁԵՐ ԳՈՀՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՎԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ

Բժշկված բորոտներից միայն մեկը վերադարձավ:

«Որտեղ են մնացած ինը», - հարցրեց Հիսուսը:

Դուք հասկանո՞ւմ եք, թե ի՞նչ է սա նշանակում: Հիսուսն ասել էր. «Գնացե՛ք և ցո՛ւյց տվեք ձեզ քահանաներին»: Հիսուսը չէր պատվիրել նրանցից ոչ ոքի գոհանալ Աստծուց կամ վերադառնալ Իր՝ նրանց Բժիշկի մոտ:

Այնուամենայնիվ, Հիսուսն ակնկալում էր, որ նրանք անեին դա:

Ի՞նչ է Հիսուսը սպասում ձեզանից: Արդյո՞ք Աստծո Սուրբ Հոգին դրդում է ձեզ ինչ-որ քայլեր ձեռնարկել: Արդյո՞ք Տերը դրդում է ձեզ հավատքի քայլ անել: Կա՞մ արդյոք մի ընտանիք, ընկեր, կամ նույնիսկ անծանոթ մարդ, ով օգնության կարիք ունի այս տարվա Գոհության տոների ժամանակ: Կա՞մ այնպիսի բան, ինչը, ձեր համոզմամբ, դուք պետք է անեք:

IV. ԳՈՀՈՒԹՅՈՒՆՆ ԱՊՐԵՑՆՈՒՄ Է

Կրկին կարդացեք այս աստվածաշնչյան հատվածը և հետևեք ինձ: Մենք դիտարկելու ենք երեք բառ, որոնք հաղորդում են նույն իմաստը: Երեքն էլ ցույց են տալիս, թե ինչպես Հիսուսն ապրեցրեց այս նախկին բորոտին:

> *15 Եւ նորանցից մէկն, երբոր տեսաւ թէ բժշկուեցաւ, ետ դառաւ՝ բարձր ձայնով փառաւորում էր Աստուծուն: 17 Յիսուսն էլ պատասխանեց և ասեց. Չէ՞ որ տասն էլ սրբուեցան. ապա այն ինն ո՞ւր են: 18 Ետ դառնողներ չ՚գտնուեցան, որ Աստուծուն փառք տան, բացի այս այլազգին: 19 Եւ ասեց նորան. Վեր կաց՝ գնա. քո հաւատքն ապրեցրեց քեզ:*

Սկզբում կարդացեք խոսք 15-ը. «Եվ նրանցից մեկը, երբ որ տեսավ, թե **<u>բժշկվեց</u>**...»

Կարդացեք խոսք 17-ը. Հիսուսը հարցրեց. «Չէ՞ որ տասն էլ **<u>սրբվեցին</u>**»:

Իսկ այժմ, կարդացեք ևս մեկ խոսք: Խոսք 19-ում Հիսուսն ասում է այս գոհացող մարդուն. «Վե՛ր կաց, գնա՛, քո հավատքն **<u>ապրեցրեց</u>** քեզ»:

«**Ապրեցրեց**» բառը «**սոզո**»-ն է, որը նշանակում է՝ «**փրկել**»: Հույներն օգտագործում էին այն, երբ մարդիկ ազատվում էին վտանգավոր իրավիճակներից: Օրինակ՝ նրանք օգտագործում էին «**սոզո**» բառը, երբ նավաստիները փրկվում էին ծովային փոթորկից: Մատթեոսը սկսեց իր Ավետարանը՝ պատմելով Սուրբ ծննդյան մասին: Հրեշտակը պատվիրեց Հովսեփին անվանել Մանկանը «Հիսուս», որովհետև այդ անունը նշանակում էր, որ Նա «**փրկելու էր** մարդկանց իրենց մեղքերից»: Նա «**սոզո**» էր անելու մարդկանց:

Նկարագրելով, թե ի՞նչ է լինելու այն մարդու կյանքում, ով դավանում է Հիսուսին մարդկանց առջև որպես Տեր և Փրկիչ՝ Պողոսն օգտագործեց նույն բառը.

*Որովհետև եթե բերանովդ Հիսուսին Տեր դավանես, և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, կապրես («**սոզո**»): Քանզի սրտով հավատում ենք արդարանալու համար, և բերանով դավանում ենք փրկվելու («սոզո») համար (Հռոմեացիների 10:9-10):*

Հիսուսն ասաց այս գոհացող մարդուն, ով ցանկանում էր հետևել Աստծուն մինչև իր հանգամանքների փոխվելը, և երկրպագել Աստծուն մինչև տուն վերադառնալը... Հիսուսը հռչակեց լիարժեք բժշկություն և կյանք ավելիով: Հիսուսն ասաց, որ այս մարդն ինչ-որ բան էր հասկանում:

ԱՄՓՈՓՈՒՄ

(Կարդացեք Մատթեոս 8:1-4-ը)

Մատ. 8:1-4 *- Եւ երբոր սարիցն իջաւ, շատ ժողովուրդներ գնացին նորա ետևիցը: 2 Եւ ահա մի բորոտ գալով երկրպագում էր նորան և ասում. Տէ՛ր, թէ որ կամենաս, կարող ես ինձ սրբել: 3 Եւ Յիսուսը ձեռքը մեկնելով նորան **դիպաւ** և ասեց. Կամենում եմ՝ **սրբուիր**. և նորա բորոտութիւնը շուտով սրբուեցաւ: 4 Եւ Յիսուսն ասեց նորան. Զգոյշ կաց՝ ոչ ոքի չասես, այլ գնա քեզ ցոյց տուր քահանային և Մովսէսից հրամայուած ընծան մատուցրու, նորանց վկայութիւն լինելու համար:*

Մի բորոտ մոտեցավ Հիսուսին՝ կանգ առնելով պահանջվող հեռավորության վրա: Նա ծնկի իջավ Հիսուսի առջև՝ օգնություն խնդրելով: Նրա տեսքն անգամ վանող էր:

Մատթեոսը գրում է, որ Հիսուսը պարզեց Իր ձեռքը և հպվեց այդ մարդուն:

Նա գրում է, որ Հիսուսն ասաց. «...**Սրբվի՛ր**... գնա՛, քեզ ցո՛ւյց տուր քահանային»: